
ՀՈՐՀՈՐԻ ԵՎ ՀՐԱՄԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

Անգլերենում հորդորի և հրամանի դրսևորման ձևերին անդրադարձել են մի շարք հայտնի լեզվաբաններ (Մ. Բոյանտ, Ա. Ուիլսոն, Ռ. Ուիտենոր, Բ. Իլլիշ, Վ. Վուրֆ)՝ փորձելով իրենց աշխատություններում բացահայտել դրանց առանձնահատկությունները: Թեև նրանց մեծ մասը հակված է այն տեսակետին, որ հորդորը և հրամանն առանձին իմաստաբանական կարգեր են, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է իրեն բնորոշ իմաստներ, այնուամենայնիվ նախադասությունները, որոնց միջոցով ներկայացվում են այդ իմաստները, իրենց շարահյուսական կառուցվածքով գրեթե չեն տարբերվում և երբեմն կարող են նույնիսկ նույնացվել: Ահա թե ինչու առանձնահատուկ կարևորություն է ստանում նախադասությունների այս տեսակների զանազանումը, ինչպես նաև դրանց բնութագրական հատկանիշների սահմանումը:

Թե՛ հրաման, թե՛ հորդոր արտահայտող նախադասությունները կատարում են խոսողի կամքը կամ թելադրանքը խոսակցին հաղորդելու գործառույթ և իրենց ավանդական կառուցվածքի հիմքում ունեն հրամայական եղանակով կիրառված բայ: Հենց նշված կառուցվածքային և գործառական ընդհանրությունն էլ հիմք է հանդիսանում անգլերենում նմանատիպ նախադասությունները որակելու որպես հրամայական նախադասություններ: Մինչդեռ ակնհայտ է, որ հրամայական բայաձևով արտահայտված ստորոգյալ ունեցող ոչ բոլոր նախադասություններն ունեն հրամայական բնույթ: Պայմանավորված արտաբերման հնչերանգով, որի ուժգնությունը դրսևորվում է խոսողի վերաբերմունքով և նպատակով, հրամայական եղանակի միջոցով կարելի է արտահայտել ոչ միայն խիստ հրաման, կարգադրություն կամ հրահանգ, այլ նաև մի շարք այլ իմաստներ՝ խնդրանք, խորհուրդ, առաջարկ, հրավեր, նախազգուշացում, ցուցում, արգելք և այլն: Այդպիսի նախադասություններն ունեն ավելի մեղմ բնույթ և կարող են բնորոշվել որպես քողարկված կամ թույլ հրամաններ, որոնց միջոցով խոսակցին ոչ թե պարտադրում, այլ խնդրում, համոզում, դրդում կամ հորդորում են որևէ գործողություն կատարելու: Նախադասության հենց այդ հաղորդակցական տեսակներն էլ ընկալվում են որպես հորդորական:

Հորդորական և հրամայական նախադասությունների տարբերակումը շատ ավելի դյուրին ընկալելի է կոնկրետ օրինակների¹ վերլուծությամբ: Այսպես՝

ա) “Leave me now”, - ordered Campbell.

բ) “Then get out of it - it's mine! It's me who brings the money home, not you. So get out! Get out!”

¹ Օրինակները քաղված են անգլիագիր գրողների երկերից:

զ) “Think about something cheerful, old man,”-he said.”

դ) “Mother, he's all right! Please don't worry about---.”

ե) “Be careful crossing the street. Can you see all right?”

Բերված օրինակներն ըստ իրենց շարահյուսական կառուցվածքի հրամայական են, քանի որ դրանցում ստորոգյալն արտահայտված է հրամայական եղանակի բայով, սակայն չի կարելի միարժեքորեն պնդել, որ դրանք բոլորն էլ հրաման, հրահանգ կամ կարգադրություն են: Առաջին երկու օրինակների բուն հրամայական բնույթը ակնհայտորեն երևում է ա) ordered և բ) get out! բայերի բառացի իմաստից, որոնք ուղղակի հրաման կամ կարգադրություն են արտահայտում՝ ենթադրելով պահանջվող գործողության պարտադիր և անվերապահ կատարում. գ), դ) և ե) օրինակները կարելի է բնորոշել համապատասխանաբար որպես խորհուրդ, խնդրանք և նախազգուշացում, որոնք իրենց բնույթով անհամեմատ մեղմ են, քանի որ դրանց միջոցով չի ակնկալվում գործողության պարտադիր կատարում, հետևաբար և դրանք ընկալվում են որպես հորդոր:

Հորդոր արտահայտող նախադասություններին բնորոշ է զգացմունքայնությունը, և պատահական չէ, որ դրանք արտաբերելիս հատկապես կարևորվում է հնչերանգի դերը: Հնչերանգը հաղորդակցային երևույթ է և քերականորեն չի նշույթավորվում, սակայն դրա օգնությամբ նախադասություններն ավարտուն տեսք են ստանում՝ ձեռք բերելով համապատասխան բնույթ:

Վ. Վասիլևը նկատում է, որ հնչերանգը՝ որպես բառը կամ բառակապակցությունը նախադասության վերածող ամենագլխավոր գործոն, իր հերթին զգալիորեն պայմանավորված է հաղորդակցային իրավիճակով: Ըստ նրա դիրքորոշման՝ անգլերենում ցանկացած բայի բառարանային ձև (օր.՝ go «գնալ») առանց համատեքստի կամ կյանքի իրավիճակի կարող է արտասանվել ցանկացած տոնայնությամբ, ձայնային տեմբրով, ձայնի բարձրությամբ և տևողությամբ՝ մնալով սոսկ իբրև բառարանային միավոր՝ անկարող լինելով ծառայելու որպես խոսողի մտքերն արտահայտելու միջոց: Երբ նշված վերհատույթային առանձնահատկությունների բոլոր հնարավոր համակցություններից մեկը համընկնի կյանքի իրավիճակի համապատասխան համատեքստին, ապա այդ ընտրված համակցությունը կդառնա հնչերանգ, որը բառը կամ բառակապակցությունը կվերածի նախադասության՝ Go! «Գնա՛»²:

Ս. Շմերլինգն առաջ է քաշում հրամանի զանազանման կամ դասակարգման գաղափարը՝ առաջարկելով հրամանը որակել որպես.

➤ **Խիստ հրաման (strong imperative)**, որն անվերապահորեն պետք է ի կատար ածվի (Understand his lectures! «Հասկացի՛ր նրա դասախոսությունները»):

➤ **Թույլ հրաման (weak imperative)**, որը կարելի է հասկանալ խորհուրդ, խնդրանք, առաջարկ, ցանկություն և այլն. օր.՝ Can you understand his lectures please? «Խնդրում եմ՝ հասկանաս նրա դասախոսությունները»:

➤ **Անուղղակի հրաման (not direct imperative)**, այսինքն՝ երբ խոսակցին անմիջապես հրաման չենք տալիս, այլ հասկացնում ենք հրամանողական տրամադրվածության մասին, և նա արտաբերված նախադասու-

² Տե՛ս Vassilyev V., English Phonetics: A Theoretical Course. Moscow, 1970, էջ 287:

թյան ենթախմաստից հասկանում է բուն իմաստը՝ հրամանը. օր.՝ You'd better understand his lectures. «Ավելի լավ կլինի, որ դու նրա դասախոսությունները հասկանաս»³:

Ակնհայտ է, որ Շմերլինգի ամրագրած թույլ և անուղղակի հրամանները չեն կարող դիտվել որպես բուն հրամայական նախադասություններ: Դրանք չունեն նշված տեսակին բնորոշ քերականական կառուցվածք, թեև իրականացնում են դրան համարժեք գործառույթ:

Ելնելով այն հանգամանքից, որ ցանկացած կարգադրություն, խնդրանք, հորդոր և այլն իր հիմքում ունի որևէ բանի հասնելու նպատակ, որն իրականացնելու համար ինքներս ենք որոշում՝ հրամանի թե հորդորի կամ խնդրանքի միջոցով հասնենք դրա կատարմանը, զգալիորեն կարևորվում է խոսակիցների հոգեբանական տրամադրվածությունը: Կ. Մերտենսենը առաջ է քաշում «ազդեցության» (influence) գաղափարը՝ հրամանի կամ հորդորի իրականացման արդյունավետությունն ուղղակիորեն կապելով հենց այդ գործոնի հետ: Նրա մեկնաբանմամբ՝ «հորդորը և հրամանը» այն ամենն են, ինչ դու ասում կամ անում ես, իսկ «ազդեցությունը» բացահայտում է քո ով լինելը»⁴:

Համաձայնելով Մերտենսենի հետ՝ պետք է նկատել, որ ազդեցության գաղափարն իրոք զգալի է, քանի որ առանց դրա հասցեատերը դժվար թե պատրաստակամություն հայտնի կատարելու արտաբերված հրամանը կամ հորդորը, և դրանք կարող են պարզապես անտեսվել: «Ազդեցությունն» այն հմտությունն է, որի միջոցով հնարավոր է դառնում հասցեատիրոջ հոգեբանության վրա ներգործել:

Բ. Աշերը և Է. Ավրահամը հրամայական նախադասությունը դիտում են որպես ցանկություն իրականացնելու միջոց: Նրանք հիշատակում են մաև դրողական բնույթի նախադասությունների մասին նշելով, որ դրանք կարող են ընկալվել հրամայական նախադասությանը համարժեք իմաստով, քանի որ դիմացինին դրդում են ինչ-որ բան անելու: Նրանք համոզմամբ՝ “A scorpion has just crawled up your trouser leg.” («Կարիճը հենց նոր մտավ տաբատիդ փողքի մեջ») նախադասության կիրառությունը շատ ավելի արդյունավետ է, թեև կոնկրետ հրաման չի պարունակում, քան “Take off your trousers” («Հանի՛ր տաբատդ») բուն հրամայականինը, որի դեպքում չի բացառվում երեխայի՝ հրամանին չհնազանդվելը և հակառակվելը⁵:

Տրամաբանական է, որ առաջին նախադասության դեպքում երեխան անկախ իր կամքից անմիջապես կհանի տաբատը՝ պաշտպանական ռեֆլեքսից դրդված, որպեսզի կարիճն իրեն չխայթի: Ստացվում է՝ երեխային նախազգուշացնում են, որ եթե նա չհանի իր տաբատը, ապա կարիճն իրեն կխայթի: Սակայն պետք է նկատել, որ նախադասությունը կարելի է մաև որպես պայմանական դիտել, քանի որ երեխան այն կարող է ընկալել հետևյալ կերպ. եթե ես տաբատս չհանեմ, ապա կարիճն ինձ կխայթի (If I don't take off my trousers the scorpion will bite me, **if** = պայման):

³ Տե՛ս **Schmerling S.**, Imperative subject deletion and some related matters. *Linguistic Inquiry* 6, 1975, էջ 501-511:

⁴ Տե՛ս **Mourtsen K.**, Persuasion IQ: The 10 Skills You Need to Get Exactly What you Want. New York, 2008:

⁵ Տե՛ս **Asher B., Avraham E.**, The Imperative forms of Proto-Semitic and a New Perspective or Barth's Law. // *Journal of the American Oriental Society*: Vol.128, Issue 2, 2008, էջ 233-255:

Այստեղ բացահայտվում է մի նրբություն. դիտարկված օրինակում որպես այլընտրանք հնտորեն կիրառված է հրամանին համարժեք գործառույթ իրականացնող մի նախադասություն, որը կարող է որպես նախազգուշացում կամ պայման ընկալվել:

Անցում կատարելով պայմանական հրամայական նախադասություններին՝ մենք բախվում ենք հերթական վիճահարույց խնդրին, այն է՝ արդյո՞ք պայմանական հրամայական նախադասությունը կարելի է լիարժեք հրամայական համարել: Օրինակ՝

ա) Hang the laundry outside and you can go home (*պայման*):

բ) Catch the flu and you'll be ill for weeks (*նախազգուշացում*):

Օրինակների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ եթե ա) նախադասության երկրորդ մասը չարտաբերվի, հասցեատերն այն կընդունի իբրև խիստ հրաման՝ առանց անգամ երկմտելու, հետևաբար՝ Hang the laundry outside նախադասությունը կընկալվի որպես բուն հրամայական նախադասություն: Սակայն երբ առկա է նախադասության երկրորդ մասը (and you can go home), ապա նախադասության առաջին մասը կարող է մաս իբրև պայման ընկալվել, որից կհետևի հետևյալ տրամաբանությունը. խոսողը խոստանում է թողնել խոսակցին տուն գնալ այն պայմանով, որ լվացքը փռի (If you do that you can go home!): Այսպիսով, նախադասությունը կարող է ընկալվել որպես թույլ հրաման (weak order), որն ունի ավելի մեղմ, հորդորական բնույթ, քանի որ դրա միջոցով գործողության անհապաղ կատարում չի պարտադրվում խոսակցին, այլ կարծես ուղղակի զգուշացվում է, թե երբ կամ ինչ պայմանի դեպքում վերջինս կարող է տուն գնալ: Բ) օրինակում բուն հրամայական նախադասության կառուցվածք ունեցող Catch the flu հատվածը, որն ըստ էության որպես առանձին միավոր կարող է անիմաստ դիտվել, նախադասության երկրորդ՝ and you'll be ill for weeks հատվածի առկայությամբ վերահիմաստավորվում է՝ ձեռք բերելով նախազգուշացման երանգ՝ «Եթե մրսես, ապա հիվանդ կլինես շաբաթներ շարունակ», որը բնորոշ է հորդորական բնույթի նախադասություններին:

Հորդորի ու հրամանի յուրօրինակ մեկնաբանություն է տալիս Ռ. Յեյրը: Նա առաջադրում է հասցեատիրոջ կողմից մտքի իրականացման երկու տարբերակ.

➤ Telling someone to do something (ասել ինչ-որ մեկին, որ մի բան անի):

➤ Getting someone to do something (ինչ-որ մեկին որևէ բան անել տալ):

Հեղինակի կարծիքով՝ telling someone to do something կառույցն ավելի թույլ իմաստով է օգտագործվում՝ խնդրանք, առաջարկ, խորհուրդ, նախազգուշացում և այլն, քան getting someone to do something կառույցը, որն ավելի կոշտ բնույթ ունի և կիրառվում է ուղիղ հրաման, հրահանգ, կարգադրություն արտահայտելու համար⁶:

Երբեմն զործնականում պատահում է, որ նախադասությունը կարդալիս տարակուսանք և շփոթմունք է առաջանում, քանի որ հստակ պարզ չէ, թե ինչ է տվյալ նախադասության իմաստը (հրամայո՞ւմ են, թե՞ խնդրում): Օր.՝ “Come here, please.” «Արի՛ այստեղ, խնդրում են» նախադասությունը համարվում է հրամայական նախադասություն, սակայն նախադասության

⁶ Տե՛ս Hare R., Imperative Sentences.// Mind, New Series: Vol. 58, 229, Oxford, 1949, էջ 21-39:

վերջին՝ please բառը, որը, ինչպես հայտնի է, կիրառվում է խնդրանքի դեպքում, տարակուսանքի տեղիք է տալիս: Ստացվում է, որ խնդրանքի միջոցով խոսակցին հրամայում ենք զալ այստեղ:

Մ. Բրյանտը ներմուծել է այսպես կոչված “the softened imperative” (մեղմ հրամայական նախադասություն) արտահայտությունը՝ ամրագրելով, որ դրա հիմքում ընկած է հիմնականում խնդրանքը: Օրինակ՝

ա) *Please*, let me come in, Captain Butler, she said softly. It’s Mrs Wilkes. I want to see Bonnie. «Խնդրում եմ ինձ ներս թողնեք, կապիտան Բաթլեր,- ասաց նա մեղմորեն:- Տիկին Ուիլկսն է: Ես ուզում եմ տեսնել Բոնիին»:

բ) Oh, *please* don’t leave, Lord Henry. Basil never talks when he’s painting, and it’s so boring. «Օ՛, խնդրում եմ չզնաք, լո՛րդ Ջենրի: Բեյսիլը նկարելիս երբեք չի խոսում, և ես ձանձրանում եմ»:

Նմանատիպ նախադասություններում, բացի մեղմ հնչերանգից, որպես դրանց բնույթը մեղմացնող գործոն որոշիչ դեր ունի please բառի առկայությունը: Անգլերենում բավականին գործածական է նաև had better արտահայտությունը, որը որպես please բառին համարժեք, նույնպես իրականացնում է հրամանը մեղմելու գործառույթ՝ վերածելով այն առաջարկի կամ քաղաքավարի խնդրանքի: Օրինակ՝

գ) *Better* check the oil too (մեղմ հրամայական՝ առաջարկ, խորհուրդ):

դ) Perhaps, you *had better* go to bed (մեղմ հրամայական՝ խորհուրդ, քաղաքավարի խնդրանք):

Հրամանները մեղմացնելու նպատակով կիրառվում են նաև որոշ մակբայներ, մասնավորապես՝ *now* «այժմ, հիմա», *just* «ուղղակի», *kindly* «խնդրեմ, խնդրում եմ» և այլն:

ե) *Just* stay here, okay?

զ) *Now*, Mortimer, *just* forget about it – forget you ever saw the gentleman.

Թերևս արժե անդրադառնալ նաև Բրյանտի այն պնդմանը, որ կոչականը ևս երբեմն կարող է իրականացնել please բառին համարժեք գործառույթ՝ մեղմելով ուղիղ և խիստ արձակված հրամանը, որի հետևանքով նախադասությունը ձեռք է բերում ավելի մեղմ տոնայնություն՝ ընդհուպ մինչև խնդրողական բնույթի: Օրինակ՝

Come in, my dear. «Նե՛րս արի, թանկագի՛նս»:

Come on in! «Դե շո՛ւտ, նե՛րս արի»:

Առաջին նախադասության հրամայական երանգի սրությունը շատ թույլ է, որի պատճառը *թանկագի՛նս* կոչական բառն է: Անկախ նախադասության հրամայական բնույթից՝ տվյալ դեպքում հասցեատերն ընկալում է, որ իրեն ուղղակի քաղաքավարի կերպով խնդրում են ներս մտնել: Երկրորդ նախադասությունը, որում բացակայում է կոչականը, ավելի խիստ է, դա կարգադրություն է, որը պետք է պարտադիր կատարվի:

Ըստ Բրյանտի՝ եթե միևնույն հրամանն արձակենք մի դեպքում՝ հաստատական, մյուս դեպքում՝ ժխտական նախադասության միջոցով, ապա իմաստային առունով դրանք նույն խստությունը չեն ունենա: Օրինակ՝

Think about it. «Մտածի՛ր դրա մասին»:

Don’t think about it. «Մի՛ մտածիր դրա մասին»⁷:

Հարկ է նկատել, սակայն, որ դիտարկված նախադասությունների

⁷ Տե՛ս **Bryant M.**, Equivalents of “Please”: The Softened imperative in Present-Day English: American Speech: Vol. 19, № 3, 1944, էջ 175-182:

մեկնաբանությունը շատ սուբյեկտիվ բնույթ է կրում, քանի որ դրանց ճիշտ ընկալումը և մեկնաբանումը հնարավոր է դառնում միայն խոսքային իրավիճակի և շեշտի գործոնը հաշվի առնելու պարագայում: Բացառված չէ, որ դրանցից յուրաքանչյուրը համապատասխան իրավիճակում կարող է ընկալվել և՛ որպես պարտադրանք (հրաման), և՛ որպես խորհուրդ (հորդոր, որը կարող է և չկատարվել):

Վ. Վուրֆը հստակորեն զանազանում է “Give me the plate, will you?” և “Give me the plate, won’t you?” նախադասությունների իմաստները: Առաջին նախադասությունը հեղինակը որակում է որպես դրական, իսկ երկրորդը՝ բացասական հրաման⁸: Առաջին հայացքից տարբերությունն այնքան էլ զգալի չէ, և թվում է, թե երկու դեպքում էլ առկա է զուտ հրաման: Սակայն առաջին նախադասության մեջ ակնհայտ է, որ հրամայողի խոսքն անվստահ է, վարանողական ոճի, որը հիմք է տալիս կարծելու, որ այն կարող է ընկալվել նաև որպես հորդոր: Նույնը չի կարելի ասել երկրորդ նախադասության մասին, որն ավելի վստահ է հնչում և հասցեատիրոջ առջև պարտադրանք է դնում կոնկրետ գործողություն կատարելու:

Ուշագրավ է նաև Ա. Ուիլսոնի առաջադրած այն տեսակետը, որի համաձայն հրամանը կարող է ունենալ արտակա և ներակա իմաստներ⁹: Հիմնվելով հեղինակի առաջ քաշած մտքի վրա՝ փաստորեն կարող ենք ենթադրել, որ երբ արձակում ենք հրամաններ՝ ցանկանալով, որ հասցեատերն ըմբռնի դրանք հենց ուղիղ իմաստով՝ գործ ենք ունենում արտակա հրամանների հետ: Որպես օրինակ պատկերացնենք մի իրավիճակ, երբ զայրացած ուսուցչուհին դասը խանգարող աշակերտին ուղղակիորեն դուրս է հրավիրում դասասենյակից՝ արտաբերելով՝ “Get out of the class!” «Դու՛րս արի լսարանից» բացահայտ հրաման արտահայտող նախադասությունը, որն այլ կերպ չի կարելի ըմբռնել, եթե ոչ՝ լքել լսարանը:

Սակայն գործնականում միշտ չէ, որ հրամայողը կարող է դիմել խիստ հրամայական ձևի՝ հաշվի առնելով ոչ միայն հասցեատիրոջ հետ ունեցած փոխհարաբերությունները, այլ նաև ելնելով քաղաքավարության կանոններից: Համաձայն քաղաքավարության սկզբունքի՝ խոսողը պետք է աշխատի խուսափել խոսակցի վարկանիշին սպառնացող քայլերից, որը հնարավոր կլինի, եթե կիրառվեն ներակայման տարրերը, որպեսզի խոսողի մտադրությունները հնչեն անուղղակիորեն: Նմանատիպ նախադասությունը միանգամից ըմբռնելն այնքան էլ դյուրին չէ, քանի որ բուն հրամանը թաքնված է դրա ենթատեքստում: Բացառված չէ, որ հասցեատերն այն ընկալի բոլորովին այլ իմաստով՝ նույնիսկ չկասկածելով դրա իրական նշանակության մասին: Օրինակ՝ դասի ժամանակ անընդմեջ խոսող աշակերտին ուսուցչուհին, խուսափելով կոպիտ և վիրավորական հնչող “Shut up!” «Լռի՛ր» հրամայական ձևից, կարող է ասել՝ “It’s noisy in the classroom” «Դասարանում աղմուկ է», որը նշանակում է, որ աղմուկը պետք է դադարեցվի, ավելի կոնկրետ՝ աշակերտները պետք է լռեն: Փաստորեն, ուսուցչուհին ակնարկի միջոցով, ներակայորեն կարծես հորդորում է աշակերտ-

⁸ Տե՛ս **Wurff W.**, Imperative Clauses in Generative Grammar: Studies in Honour of Fritz Beukema. Amsterdam, 2007, էջ 364:

⁹ Տե՛ս **Wilson A.**, The Imperative Fallacy in Kelsen’s Theory // The Modern Law Review: Vol. 44, № 3, 1981, էջ 270-281:

ճերին չաղմկել, ուստի վերը նշված նախադասությունը տվյալ դեպքում կարող է ընկալվել որպես ներակայորեն արտահայտված հորդոր:

Ներակայման տարրերի նպատակային և արդյունավետ կիրառման համար կարևորվում է «պատշաճ հանգամանքներ» (suitable circumstances) հասկացությունը: Դա մի իրավիճակ է, երբ անհրաժեշտություն չկա հրամայելու, այլ մի փոքրիկ ակնարկն անգամ բավական է, որ դիմացինը գլխի ընկնի և կատարի ասվածը: Որպես ասվածի հիմնավորում կարելի է դիտարկել “Charles, the door is open!” նախադասությունը, որի միջոցով կինը պարզապես քաղաքավարի իրազեկում է ամուսնուն, որ դուռը բաց է, և վերջինս, կռահելով կնոջ ցանկությունը, անմիջապես փակում է այն: Մտերմիկ փոխհարաբերությունները օգնում են միմյանց ճիշտ հասկանալու, և տվյալ դեպքում բոլորովին էլ կարիք չկա որևէ գործողության դրդելու նպատակով արտաբերել “Charles, close the door!” խիստ հրամայական տիպի նախադասությունը:

Ուշադրության է արժանի նաև Բ. Մայոյի և Բ. Միտչելի առաջ քաշած այն տեսակետը, որ խոհարարական գրքերում զետեղված բաղադրատոմսերի պատրաստման եղանակները ևս կարելի է համարել հրամայական բնույթի¹⁰: Նրանք թերևս առաջնորդվում են այն տրամաբանությամբ, որ դրանք ձևական առումով հրամայական բնույթի են՝ պայմանավորված դրանցում՝ հրամայական եղանակով կիրառված բայի առկայությամբ, որի գործառույթն ինչ-որ բան կատարելուն դրդելն է: Հարկ է նկատել, սակայն, որ բաղադրատոմսերում և դեղամիջոցների ցուցումներում զետեղված “*Boil* the eggs for ten minutes” կամ “*Swallow* the pill with much water” տիպի նախադասությունները թեև ձևաբանական-կառուցվածքային առումով անզլերենում դիտվում են որպես հրամայական նախադասություններ, այնուհանդերձ գործաբանական-իմաստային առումով դրանք ընկալվում են որպես ցուցում, որն ուղղված է վերացական հասցեատիրոջ:

Հորդորի ուրույն դրսևորում կարելի է համարել նաև Աստծո պատվիրանները, որոնք իրենց էությանբ բարոյախրատական նշանակություն ունեն: Օրինակ՝ Honour thy father and thy mother «Պատվիր հորդ ու մորդ», Thou shalt not kill «Մի՛ սպանիր», Thou shalt not steal «Մի՛ գողանար», Thou shalt not bear false witness against thy neighbour «Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր» և այլն:

Ուշագրավ է նաև է. Լեյն Բերդսլիի այն տեսակետը, որ նա առաջարկում է ներմուծել «բարոյական հրամաններ» (ethical imperatives) հասկացությունը՝ որպես հիմնավորում դիտարկելով հետևյալ նախադասությունները.

1. Forgive your enemies.
2. Hurry up!¹¹

Հեղինակը դրանցից առաջինը չի համարում բուն հրաման, այլ որակում է այն որպես պատվիրան կամ ուղերձ՝ ուղղված համայն մարդկությանը, որն ունի բարոյախրատական նշանակություն: Նա բարոյական հրամանների գրեթե միշտ ընդունելի լինելու զաղափարը պայմանավորում է դրանց արժեքայնությամբ:

¹⁰ Տե՛ս **Mayo B., Mitchell B.**, Symposium: Varieties of Imperative. Proceedings of the Aristotelian Society, Supplementary Volumes, Vol. 31, 1957, էջ 161-190:

¹¹ Տե՛ս **Lane Beardsley E.**, Imperative Sentences in Relation to Indicatives // The philosophical Review: Vol. 53, № 2, 1944, էջ 175-185:

Երկրորդ նախադասությունը, թեև բնույթով հրամայական է, սակայն այնքան ազդեցիկ չէ, որքան նախորդը: Նրա համոզմամբ, պարզապես հրամայելով՝ մենք դիմացինին կարող ենք անգամ մեր դեմ տրամադրել:

Այսպիսով, հորդորի և հրամանի դրսևորումների ուսումնասիրությունը բացահայտում է առաջինի անհամեմատ մեղմ բնույթը, որն էլ հենց հիմք է հանդիսանում դրանք միմյանցից տարանջատելու: Ի տարբերություն հրամայական նախադասությունների, որոնց հիմնական հաղորդակցական գործառույթը հրաման, հրահանգ կամ կարգադրություն արտահայտելն է, և որոնք անպայմանորեն ներառում են հրամայական եղանակով կիրառված բայաձև, հորդոր արտահայտող նախադասությունների նպատակը խնդրելու, համոզելու, խորհուրդ կամ ցուցում տալու, ակնարկելու, առաջարկելու, նախազգուշացնելու միջոցով հասցեատիրոջը որևէ գործողության դրդելն է: Հորդորը, ըստ էության, կարող է որակվել որպես թույլ հրաման, որն ավելի լայն հասկացություն է և կարող է ներկայացված լինել ինչպես հրամայական, այնպես էլ ոչ հրամայական կառույցներով:

Որպես ամփոփում կարելի է եզրակացնել, որ հորդորողը խոսակցին խիստ հրաման չի տալիս, այլ կարծես փորձում է հասցեատիրոջ հետ «լեզու գտնել»՝ իբրև հիմնանպատակ ունենալով իր ցանկության ի կատար ածունը վերջինիս կողմից:

Բանալի բառեր – *հրաման, հորդոր, խիստ հրաման, թույլ հրաման, մեղմ հրաման, արտակա հրաման, ներակա հրաման, դրական հրաման, բացասական հրաման, բարոյական հրաման*

ДАВИД ЕПИСКОПОСЯН – Особенности выражения побуждения и повеления в английском языке. – В статье рассматриваются способы, какими по-английски выражаются и различаются повелительное и побудительное наклонения, выявляются их функциональная общность и семантические различия, а также формулируются характерные особенности, благодаря которым возможно чётко различать повелительное и побудительное предложения.

Ключевые слова – *повеление, побуждение, строгое повеление, слабое повеление, мягкое повеление, прямое повеление, косвенное повеление, позитивное повеление, негативное повеление, этическое повеление*

DAVID YEPISKOPOSYAN – The Peculiarities of Manifesting Inducement and Imperation in English. – The article introduces the means of expressing imperation and inducement in English as well as the possibilities of their differentiation, similarities and semantic divergences. Some characteristic definitions are also presented, due to which it becomes possible to distinguish imperative and inductive sentences distinctly.

Key words – *imperative, inducement, strong imperative, weak imperative, softened imperative, direct imperative, indirect imperative, positive imperative, negative imperative, ethical imperative*